Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11003/25-ԳՑ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 3

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 5. Գեղարքունիք - ցերեկային կենտրոն (Ճամբարակ, Սևան) |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025-31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.07.2025 -30.09.2025թթ. |
| Ներկայացման օր | 01.10.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Թիմ լիդեր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ-հոգեբանական օգնության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 45 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է թվով 5 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
  Հոգեբանական աջակցության շրջանակներում հոգեբանի կողմից հաշվետու ժամանակահատվածում 18 շահառուի տրամադրվել է անհատական խորհրդատվություն:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- **Ազատ ժամանցի** կազմակերպման շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ մանր եւ խոշոր մոտորիկայի, ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերի, ակտիվացնող պարերի, կապերի ընդլայնման, հյուրերի ընդունելության, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 3 խմբակ՝ երգ-երաժշտության, գրական, ձեռագործության և շյուղագործության, որոնց մասնակցել է թվով 35 շահառու:
  Կազմակերպվել է թվով 12 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է 45 շահառու: Իրականացված միջոցառումներն են՝ Սահմանադրության օր, Վարդավառ, Սուրբ Աստվածածնի վերափոխման օր (2 անգամ), Անկախության օր (2 անգամ), շահառուների ծննդյան օրերի նշում (3 անգամ), Ամառային ճամբարի շրջանակներում եռօրյա միջոցառումների շարք (2 անգամ), ֆիլմի դիտում:
- **Աշխատանքային/արտթերապիայի տրամադրման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է հոգեբանի թվով 15 հանդիպում՝ ուղղված խմբային աշխատանքում շահառուների ինտեգրմանը, հուզական կայունության հաստատմանը, որին մասնակցել է թվով 27 շահառու:
- **Կենտրոնում սննդի տրամադրման** շրջանակներում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:
- Թվով 2 շահառու օգտվել է լվացքի ծառայության տրամադրումից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Գերմանիայի դեսպանի այց (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/svbvyl),
- Ամառային ճամբար (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surli.cc/qoeuem, https://surl.li/dnmzvs, https://surl.li/hmjfqv),
- Շահառուների այցելություն Սևանի ազգագրական թանգարան և «Բոհեմ» արվեստանոց-թեյարան (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.lu/issasg),
- Արտթերապիայի խմբակ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.lu/hbgnqb),
- Այց Ճամբարակի պատմական վայրեր (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/qggqnh):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված են հետևյալ գործողությունները.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում արդյունավետ համագործակցություն է իրականացվել ՄՍԾ տարածքային կենտրոնների, համայնքապետարանների, առողջապահական կազմակերպությունների հետ՝ շահառուների հայտնաբերման և արդեն իսկ գրանցված շահառուների խնդիրների կարգավորման նպատակով:

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| h/h | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 41/44 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 27 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 7 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 5 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 1 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 6 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 37 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 32 |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 44 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 27 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 35 |
| 5.1 | երգ-երաժշտություն | 16 |
| 5.2 | գրական | 21 |
| 5.3 | ձեռագործության և ջյուղագործության | 15 |
| 6 | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 44 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 12 |
| 7. | Այլ ծառայություն (նշել)<br>Անհատական հոգեբանական խորհրդատվություն<br>Լվացքի ծառայություն | <br>18<br>2 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «01» 10. 2025թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)